

ՀԱՅԲ ՍՈՒՐԲԸ

Ա.

Ծաղկոցեցի Յովհաննէս հայր սուրբը միշտ խորին բերկրութեամբ է յիշում իր փոքրաւորութեան օրերը՝ Քեանդեազըմեազի մօտ Թարգմանչաց՝ անապատում։ Քեանդեազըմեազը մի խոտակեաց կրօնաւոր էր. այդ անունը ներան տուել էր շրջակայ հայ և թուրք ժողովուրդը, որի աչքում նա ոչ թէ սոսկ վարդապետ էր, այլ մի իսկական ճգնաւոր, մի կատարեալ սուրբ մարդ։ Տասնեակ տարիներ ապրելով Թարգմանչաց վանքում, նա ոչ մի անգամ ոտք չի դրեց շրջակայ գիւղերում։ Նա միշտ խուսափում էր մարդկանցից. նրան երբէք չէին յափշտակում այս անցաւոր աշխարհի վայելչութիւններն ու հրապուրանքները, ուստի նա գիւղեր չէր մտնում երբէք. այդ պատճառով էլ կոչուեց Քեանդեազըմեազ ¹⁾, այսինքն գիւղ չը մտնող։ Մեծ տօներին վանքում հաւաքւում էին հազարաւոր ուխտաւորներ։ Կանանց երես չը տեսնելու համար Քեանդեազըմեազն առանձնանում էր մի մութը քարայրում, որը կոչւում էր ճգնաւորի խուց։ Նա այնտեղ մնում էր ամբողջ օրերով, հաց ու ջրով միայն կերակրուելով. օր ու գիշեր նա աղօթում էր այնտեղ ու իր յորդառատ արցունքով թուշում չոր քարերը։ Իր քարայրից նա դուրս էր

¹⁾ Թուրքերէն բառ է, նշանակում է գիւղ չը մտնող, գիւղից խուսափող։

գալիս միայն այն ժամանակ, երբ ուխտաւորները բոլորովին հեռանում էին վանքից, երբ հինաւուրց մենաստանը իսպառ մաքրւում էր կանանցից: Վանքի տնտեսութիւնը վարում էր Բաղունց Ստեփաննոս վարդապետը: Հատ բանիմաց ու եռանդուն տնտես էր Ստեփաննոս հայր սուրբը. նա վարում էր, նա հնձում էր, կախում էր ցորենն ու գարին ու լցնում էր վանքի շտեմարանները: Վանքն ունէր իր սեփհական գութանը գոմէշներով ու եզներով: Ստեփաննոս վարդապետն ինքն էր բռնում գութանի մածը, «հօ» անում եզներին ու օրհնում հօտաղներին, որոնք երգելով իրանց «դօրօն»¹⁾, աջ ու ձախ «ջան» էին ասում գոմշուկներին ու եզներին ու միշտ առանց, առանց քշում նրանց: Հայր սուրբն իր շարականներով երբեմն ձայնակցում էր հօտաղներին. նա յոգնել չը գիտէր, նա օր ու զիշեր աշխատում էր միշտ:

Վանքի նախիրը ծածկում էր լայնածաւալ հովիտներն ու դաշտերը: Կաթը ջրի նման հոսում էր. վանքը միշտ, ձմեռ, ամառ, լիքը լկլկում էր. շրջակայ ժողովուրդը առատութեամբ օգտւում էր նրա բարիքներից, երբ նա կարէր էր զգում, երբ տիրում էր սով, չքաւորութիւն, երբ գալիս էին մուկն ու մորեխը:

Բ.

Անցան տարիներ: Քեանդեազրմեազ ու Ստեփաննոս հայրերը ծերացան. հարկաւոր էր մտածել վանքի ապագայի մասին: Մի օր Քեանդազրմեազը կանչեց իր մօտ Ստեփաննոս վարդապետին ու ասաց. «հայր սուրբ, մենք արդէն ծերացել ենք, էսօր-էգուց մեռնելու ենք, եկ, քա-

¹⁾ «Դօրօն» հօտաղների երգ է. երգում են վար ու ցանքսի ժամանակ:

նի դեռ կենդանի ենք, մի ժառանգ թողնենք այս անապատում, որպէս զի նա մեզանից յետոյ էլ լայսպէս չէն մնալու:

— Ո՞ւմ թողնենք, հայր սուրբ, — հարցրեց Ստեփաննոս վարդապետը:

— Ծաղկոցեցի Յովհաննէսին. նրան պէտք է արեղայ ձեռնադրել. ուրիշ ոչ որի մեր վանական ծառայողներից ես յարմար չեմ գտնում: Սրբազանն ինձ վաղուց անձամբ խօսք է տուել նրան ձեռնադրել, երբ ես ցանկութիւն կը յայտնեմ: Դու հիմա պատրաստուիր նրան վերցնել ու տանել քաղաք ձեռնադրելու:

— Հայր սուրբ, — ասաց Ստեփաննոս վարդապետը, — ահա Յովհաննէս Ծաղկոցեցին դեռ պակաս-պաւտ տեղեր շատ ունի, հարկաւոր ա նրան մի առ ժամանակ էլ պատրաստել, որպէս զի սրբազանի առաջին սեւերես չի լինենք. ահա նա դեռ այլեւ-բէնը չի վերջացրել:

— Գիտեմ, գիտեմ, — պատասխանեց հայր սուրբը, — այլեւ-բէնը նա դեռ չի մարսել. այդ ոչինչ. յետոյ երբ մաջալ ¹⁾ լինի, կը սովորի. գրոց լեզւում նա շատ ճարտար ա, ինչ հարկաւոր ա, նա արդէն անգիր իմանում ա, էլ այլեւ-բէնն ի՞նչ ա անում. նա լաւ տնտես ա, նա իմ ու քո տեղը կունի. այդ ամենագլխաւորն ա:

— Լաւ ես ասում, հայր սուրբ, — պատասխանեց Ստեփաննոս վարդապետը, — ես էլ եմ կարծում, որ վերջը Յովհաննէսն ա մեր յիշատակը այս վանքում պահպանելու. դէ որ այդպէս ա, նամակ գրի սրբազանին, որ հետո տանեմ:

— Նամակը կը գրեմ, հայր սուրբ, — պատասխանեց Քեանդեազրմեազը, — դու էլ չիտակ պատրաստութիւն տես. սրբազանի մօտ դատարկ գնալը մեր անմին վայել չի:

¹⁾ Ժամանակ:

մառանդ լաւ պտուի, քո խելքի կտրած ամեն բանից հետդ զատ վեր առ։ Յովհաննէսի մօտ էլ հէնց հիմա մարդ ուղարկիր, տաւարից կանչիր ու այս մի քանի օրը նրա հետ աղօթքները, շարականներն ու պատարագի արարողութիւնները մի լաւ սերտիր։

— Զատ բարի, հայր սուրբ, — ասաց Ստեփաննոս վարդապետն ու գուրս գնաց Քեանդեագրմեաղի խցից։

Գ.

Յովհաննէս Ծաղկոցեցին շատ խոնարհ ու հնազանդ փոքրաւոր էր, ամա ինչ արած, որ կարդալ-գրելում հրմուտ չէր։ Զատ տանջուեց ու չարչարուեց խեղճ Քեանդեագրմեաղը, բայց Յովհաննէսը տետրն անգամ չը վերջացրեց։ Ժամասացութիւնը կամաց-կամաց անգիր սովորեց, ամա կարդալը չը մարսեց, չը նայած Քեանդեագրմեաղի օրհնուած գաւազանի հարուածներին։ «Ջահրիմար ըլի սա, թա տետրն ան,— մտածում էր երբեմն ինքն իրան Յովհաննէսը,— անտէրն այսքան կուճուր ¹⁾ ու այսքան դժուար։ Էդ Աստուած վեր կունի։ լաւ, սա էս ինչ ա, որ ես կարողանում չեմ երկու օրում ծայրէ ի ծայր անգիր անել։ Կէ էն մեծ-մեծ հաստ գրքերից լինի, ով դարդ կանի։ Էն ղովէն ²⁾ եաշողն էլ ա կը տեսնայ, որ ես մի բան եմ սովորում»։ Ինքն իրան նամուս էր ընկնում Յովհաննէսն ու սկսում վրայ-վրայ սերտել տետրը. բայց երբ Քեանդեագրմեաղի հզօր աչքերի առաջն էր դուրս դալիս, ամեն բան մտիցն ընկնում էր, մնում էր կմկմացնելիս. նա էլ առնում էր իսկոյն գաւազանն ու զորս դու պատուիրեցեր շօշափում նրանով մեր Յովհաննէսի գլուխն ու մէջքը։ «Անիրաւ, գնան, սովորի. անի-

¹⁾ Փոքր։ ²⁾ Կողմից։

լաւ, գնահ, սովորիւ—կրկնում էր հայր սուրբը, նի պրա-
նելով, Դուրս գալով Քեանդեազըմեազի խցից, Յովհան-
նէսը մտնում էր տնտեսատուն, մի հաց աղլուխում փա-
թաթում, մէջքին կապում ու պուկ անում ¹⁾ դէպի Ծի-
րանաւորի ձորը, տաւարի կուշտը ²⁾, իր մտերիմ նախը-
շի Քիբիի մօտ, որից նա աւելի շատ բան էր սովո-
րում, քան Քեանդեազըմեազից: Քիբին, նախըշի վնեւով,
միկնոյն ժամանակ կատարում էր վանքում և դպրի պաշ-
տօնը. պատարագի ժամանակ նա միշտ սպասաւորում էր
Քեանդեազըմեազին. բոլոր աղօթքներն ու պատարագի
արարողութիւնները նա բերանացի, անգիր գիտէր: Յով-
հաննէսի իսկական ուսուցիչը նա էր: Յովհաննէսը նրա-
նից երբէք չէր քաշւում. միշտ ստիպում էր, որ Քիբին
նրան աղօթքներ, շարականներ, սաղմոսներ ու զրաբար
սովորեցնէ: Երբ տաւարի նախիրը ժողովում էր Ծիրա-
նաւորի կամ Հին Անապատի առուի ափին կէսօրեւու,
Քիբին Յովհաննէսի հետ միասին շուաքի տակն էր քաշ-
ւում ու սկսում էր նրան ուսուցանել աշխարհիս բոլոր
իմաստութիւնները: Ամենից դժուար բանը զրաբար սո-
վորեցնելն էր. բայց Քիբին զրաբարի համար այնքան էլ
դէս ու դէն չէր ընկնում. նա ունէր մի շատ հեշտ ու
հանճարեղ մեթօդ: Նա ասում էր իր սանին. «աշխարհա-
բար խօսքի առաջին եթէ «Զ» դնես, նա իսկոյն զրա-
բար կը դառնայ. զօրօրինակ՝ տանձն, որն ընկաւ ծա-
ռից, դեռ խակ էր. դիր ամեն մի խօսքի առաջին «Զ»
ու տես, ինչ երեւելի զրաբառ ա դուրս գալիս՝ զտանձն,
զորն զընկաւ զծառից զդեռ զխակ էր:

— Զեա՛ն, ա՛ն Քիբ, նանը մեռնի, էդա զրաբար
հա՛ն,— հիացմամբ նկատում էր նրան Յովհաննէսը,— եանի
էդ իմաստութեանէդ որ մի պատառ էլ ինձ տաս, ի՛նչ կըլի:

¹⁾ Գնում գաղանազողի: ²⁾ Նախիրի մօտ.

—Գլխամեռ, սովորի, որ դու էլ իմաստուն դառնաս,—հպարտութեամբ ասում էր Քիբին,—իսկ գիտնե՛լ իմ կարկածին ¹⁾ քանի դազանակ ա տրաքել, որ ես ըսհենց իմաստուն եմ դառնել։ ափսոս, որ պսակուած եմ,—աւելացնում էր նա,—իմ հօր վիզը կոտրի, ինձ պսակելով, թէ չէ եթէ ես ազափ ²⁾ լինէի, հմի Քանդեազրմեազ հայր սուրբը վաղ էր ինձ տարիւ սուրբազանի մօտ ու վրդապետ չինել։

Յովհաննէսը, տեսնելով, որ վանքում վարդապետութեան միակ թեկնածուն ինքն է, մեծ եռանդով իմաստութեան պաշար էր վերցնում նախրչի Քիբուց, ամա լինչ կանես, որ զահրիմար տետրը միշտ խանգարում էր նրան. չարբանդի պէս անտէրն ընկել էր առաջն, էլ թողնում չէր, որ ուսումնածարաւ Յովհաննէսը ոտով-գլխով իմաստութեան անձնատուր լինի։ Մի անգամ Քեանդեազրմեազը լաւ քօթակ տուեց Յովհաննէսին, այն պատճառով, որ նա «բան» բառը «պեան» կարդաց։ Քեանդեազրմեազը Ծաղկոցեցուն նի պրանեց, ասելով՝ «էդ ո՛նց պեան ւ, էդ ո՛նց պեան ւ, անիծուած. դէ գնա ու մինչև էգուց պեանդ բան չինի, թէ չէ էս գաւազանը էդ ախմախ գլխիդ ջարդ ու փշուր կանեմ»։ Յովհաննէսը տնտեսատնից մի քանի հատ լաւաշ վերցրեց ու գնաց Ծիրանաւորի ձորը, տաւարի կուշտը, իր մտերիմ Քիբուց իմաստութեան դասեր առնելու։

Պատմեց Քիբուն իր գլխին եկած չարիքը։

—Անտէր ըլի քո տետրն, անտէր,—ասաց Քիբին,—էդ զահրիմարաւը դու գատ չես դառնալ. լան էն ա, հրետին ժամագիրքը ձեռդ առ, էսօր-էգուց ահր վրդապետ պտես դառնալ։

—Յը՛ ը՛, ես էս զահրիմար տետրը հէնց տեղ ու-

1) Գլխին, 2) Ամուրի։

դարկեմ, որ գնալն ըլի, էլ ետ դառնալը չըլի,—ասաց Յովհաննէսն ու, հանելով գրպանից մի նոր փափուկ լաւաշ, նրա մէջ փաթաթեց տետրը, Քիբին հետաքրքրութեամբ նայում էր այդ գործողութեան: Տետրը լաւաշի մէջ փաթաթած Յովհաննէսը մօտեցաւ Չամամ կովին ու փաթեթն ուղղակի դէմ արաւ նրա դնչին: Գովը հոտոտեց փաթեթը, լաւաշն խսկոյճ շարժեց նրա ակորժակը, նա բացեց բերանը, առաւ ատամներով Յովհաննէսի ձեռքից լաւաշի փաթեթն ու մի այլն-օյլն ծամծմելուց յետոյ կոլ տուաւ:

—Հըր', քու նանը մեռնի, Չամամ կով,—բացականչեց Յովհաննէսը,—ա՛ Քիբ, տես, ո՞նց կերաւ տետրս, ո՞նց տրամեռը թամամ րապունի ¹⁾ ա՛ կտրելու, րապունի,—ասաց Յովհաննէսը ձեռքերը կողքին դրած յաղթական հայացքով նայելով Չամամ կովին:

—Ադա՛, —ասաց Քիբին, —դրուստ ես ասում, Չամամը րապունի ա՛ կտրելու ²⁾, ամա դրանից օրէս ետի ծնուածն էլ թամամ իմաստունն ա՛ ըլիւ, իմաստուն:

—Հը՛ր', —ասաց Յովհաննէսը,—մի վախտ ³⁾ որ էս ձորերն իմաստուններով լցնեմ ոչ, մքամ էդ ո՞նց կըլի:

—Կը լցնես, կը լցնես, դու դեռ վրդապետ դառ, —ասաց Քիբին,—ալամեաթ ⁴⁾ բաներ շատ ես անելու:

Տետրը Չամամ կովին ուտացնելուց յետոյ Յովհաննէսը մի առ ժամանակ վանքից դադարդին ընկաւ ⁵⁾, որպէս զի Քեանդազըմեազը չիմանայ տետրի անհետանալը: Գիշերները նա գալիս էր տաւարի հետ թովլումը մնում, իսկ առաւօտները նրանց հետ գնում կրկին հանդը: Սյգպէս մի քանի օր շարունակուեց: Վերջապէս մի

1) Բապունի, գիտնական, ամեն բան իմացող. ռաբբի, ռաբբունի բառերի աղաւաղումն է: 2) Դառնալու: 3) Ժամանակ: 4) Զարմանալի: 5) Կորաւ:

օր Քեանդեագրմեազը, որն արդէն իմացել էր Յովհաննէսի բացակայութեան պատճառը, պահանջեց, որ Ծաղկոցեցուն տափի տակիցն է, գլխիցն է, գտնեն ու բերեն իր մօտ։ Վանահօր հրամանը թունդ էր, թագնուել այլ ևս չէր կարելի։ Յովհաննէսը եկաւ, չորեք վանահօր առաջին ու յանցաւոր գլուխը խոնարհեցրեց նրա առաջ։

—Ադա, տետրդ ուր ա,—հարցրեց Քեանդեարգրմեազը։

—Հայր սուրբ, Համամ կովը լաւաչի հետ ձեռքիցս խեց,—պատասխանեց Յովհաննէսը։

—Յետոյ ի՞նչ արաւ. ըստույնի կտրեց, չէ։

Յովհաննէսն էլ բան չի գտաւ պատասխանելու։

Ադա, ա՛ն խիծուած,—ասաց Քեանդեագրմեազը և օրհնուած մհակով բոլոր ուժով ու եռանդով սկսեց նի պրանել Ծաղկոցեցուն, ասելով՝ «բա՛ն բու՛ն անուա՛րը ո՛նց վեր կալաւ, որ նա ըստույնի կտրեց, դու ո՛չ. նա ըստույնի կտրեց, դու ո՛չ. դէ՛ հմի էլ դու գնա՛ ըստույնի կտրի»։ Այդ ասաց ու ժամագիրքը դրեց Յովհաննէսի առաջին։ Քեանդեագրմեազը մի գլուխ կարդաց, Յովհաննէսը նրա հետ միասին կրկնեց, աչքի մինը միշտ օրհնուած մհակի վրայ պահելով, որ չը լինի, թէ զահրիմարը մնել նրա գլխին իջնի։ Դասը վերջացաւ։ Յովհաննէսն առաւ Քեանդեագրմեազի աջը, վերցրեց ժամագիրքն ու գնաց Ծիրանաւորի ձորը իր մտերիմ Քիբիի մօտ ըստույնի կտրելու։

Դ.

Անցան մի քանի ամիսներ։ Սրբազանից հրաման եկաւ, որ Յովհաննէսին ուղարկեն քաղաք արեղայ ձեռնադրելու համար։ Քեանդեագրմեազը կանչեց իր մօտ Ստեփաննոս հայր սուրբին ու պատուիրեց նրան պատրաս-

տուժիւն տեսնել Յովհաննէսին քաղաք տանելու համար։ Ստեփաննոս հայր սուրբը սկսեց պատրաստուել, գաթայ ու բաղարջ թխեց, մի քանի հատ հաւեր մորթեց ու եփեց, մեղր ու կարագի մեծ պաշար վերցրեց, վանքի դառներէց մի լաւը ճոկեց, որ իրանց հետ տանեն սրբազանի համար։ Երբ ճանապարհուելու օրը հասաւ, ահն ու դողն ընկաւ մեր խեղճ Յովհաննէսի սիրտը։ «Ճշմարիտ է, նա ուզում է վարդապետ դառնալ, բայց ոչ այսքան շուտ։ ահր նրա միրքում դեռ մի հատ էլա սպիտակ մալ չի կայ։ վարդապետն առանց սպիտակ միրուքի ի՞նչ վարդապետ է, նա դեռ վարդապետածուտ է, նրան ով «Աստուած օգնական» կասի,—անցնում էր այդ բոլորը Յովհաննէսի մտքով։

Օրը շաբաթ էր։ Առաւօտեան ժամից յետոյ Ստեփաննոս հայր սուրբը մտաւ Քեանդեազմեազի խուցը նրա օրհնութիւնն ստանալու ճանապարհուելու համար։ Երբ նա խուցից դուրս եկաւ, կանչեց Յովհաննէսին, բայց վանքում Յովհաննէս չը կար։

—Աղա, Հանէսն ի՞նչ ըլաւ,—հարցրեց Ստեփաննոս հայր սուրբը վանքի հորթարած Պօղոսից։

Գնաց տաւարի կուշտը,—պատասխանեց նա։

—Ինչո՞ւ։

—Գիտում չեմ, հայր սուրբ, սուտ էր, ըղորթ ¹⁾ էր, ասեց՝ Խնձոր եզն ու Մարալ կովը կորել են, գնում եմ մանգալ ²⁾։

—Գլխամեռը սուտ ա՛ ասել։ դէ շուտով գնա՛, կանչի, ասա՛՝ հայր սուրբը ճանպա՛ ա՛ ընկնում։ եկ։

Պօղոսն իսկոյն վազեց, գնաց վանքի մօտիկ բլուրը բարձրացաւ ու սկսեց բարձր, շատ բարձր ձայնով կանչել՝ «Հէ՛հ հանէս, հանէս»,—կանչեց նա։ Յովհաննէսը

¹⁾ Ճշմարիտ։ ²⁾ Փնտռել։

ձայն չի տուեց: Երկրորդ, երրորդ անգամ Պօղոսը կանչեց, աւելի ու աւելի բարձրացնելով: Վերջապէս Աշառի ծմակից Յովհաննէսը ձայն տուեց, ասելով՝ «Հէյ, հէյ. արա, ա՛ Պօղ, ի՛նչ ես ասում, ի՛նչ»:

—Արա, հայր սուրբն ասում ա՛ եկ է, եկ:

—Արա, հայր սուրբն ինձ ի՛նչ անում, ի՛նչ:

—Արա, տանում ա քեզ վրդապետ շինի է, վըրդապետ:

«Տէր մեղայ քեզ Աստուած, էս ի՛նչ խաթայ էր, որ ինձ հետ պատահեց,—ասաց Յովհաննէսն ինքն իրան, ծոծրակը քորելով,—ադա, ա՛ Քիր, էս ո՛նց անեմ, դնամ Հեանգազ քարի տակին գաղլու ⁴⁾ կենամ,—դարձաւ նա իր մտերիմ Քիրին:

—Ա՛ դլխամեռ,—ասաց Քիրին,—գաղլու կենալով դատ չես շինիլ. էլ ախիրը քեզ կը գտնեն. ասում են մի մօլլա հաջի չէր գնում, գլուխը թակելով էին տանում, բու գլխին էլ նոյն օյինը կը դնեն, եթէ գնաս Հեանգազ քարի տակին դաղլու կենաս. լաւն էն ա քու կամբով գնա վրդապետ դառ:

—Ադա, ահր ես կարալ ¹⁾ չեմ վրդապտութիւն անել, կարդալը դեռ գիտում չեմ:

—Ժամ ասիլը հօ գիտում ես,—հարցրեց Քիրին:

—Հա, մի այլին-օյին գիտում եմ,—պատասխանեց Յովհաննէսը:

—Դէ էդ էլ բաւական ա, կարդալն էլ կամաց-կամաց կը սովորես: Մնականանց վրդապետն էլ չէր կարդալը գիտում, ամա մի տեսնալ պտիր, ոնց էր ժամ ասում: Մեր Քեանդեագրմեագ հայր սուրբը, ճշմարիտ ա, շատ ա իմաստուն, ամա ժամ ասիլում կարալ չէր Մնականանց վրդապետին յաղթի:

¹⁾ Թագ կենամ: ²⁾ Կարող չեմ:

—Ա՛ Բիբ, — հարցրեց Յովհաննէսը, — սրբազանն ինձ քննութիւն կանի. խելքդ ի՞նչ ա կտրում, ի՞նչ կը հարցնի:

—Ամեն բան էլ կը հարցնի, — պատասխանեց Բիբին, — նա ամենից շատ կարգալին զօռ կանի, դու տղայ ես, անգիրին զօռ արած. ինչ որ հարցնի, դու սուտ ա, ըղորթ ա, սոռալի ¹⁾ ասած, հէնց կը կարծի, թա դու թամամ ըսպունի ես: Դու հմի ինձ էն ասած, անգիրներումը ո՞նց ես, շատ վախտ ա չեմ հարցրել:

—Ա՛ Բիբ, անգիրներումը լաւ եմ, միայն Հայր մերը «հաց բեր»-էն դէնը մտիւ կենում չի. մի, քե մատաղ, ասած, տեսնեմ «հաց բեր»-էն դէնը ի՞նչ ասում:

—Ադա, ա . . . տղի տղայ, — բարկացաւ Բիբին, — էդ թամամ խայտառակչութիւն ա. էս Աշառի ծմակէն որ մի արջ բռնեն, տանեն սրբազանի կուշտը, նա, հաւատած, քեզանից լաւ քննութիւն տայ. ավսոս, որ նրան վրդըպտութիւն չեն տալ: Դէ ասա՝ Հայր մեր...

Բիբին սկսեց Հայր մերն ասել, Յովհաննէսը նրա յետևից կրկնել. երբ «հաց բեր»-ին հասան, Բիբին միջանկեալ ասաց՝ «այ հացը քու գլխին հարամ ըլլ» ու շարունակեց: Երբ մի քանի անգամ կրկնեցին Հայր մերը, Բիբին Յովհաննէսին ճանապարհ գցեց, ասելով՝

—Դէ գնա, գնա, ա գլխամեռ, գնա վրդապետ դառ, ամա «հաց բեր»-էն դէնը մտիդ լաւ պահի, հա՛:

—Կը պահեմ, ա Բիբ, կը պահեմ, արխային ²⁾ կաց, — ասաց Յովհաննէսը, ճանապարհուելով. — ամա դու էլ մտիդ լաւ պահի, որ վրդապետ վախտս էլ ետ միտս գըցես, երբ ես մոռանամ:

¹⁾ Շատ արագ: ²⁾ Միասին ձեռք:

Ե.

Յովհաննէսը Ստեփաննոս հայր սուրբի հետ գնաց քաղաք սրբազանի մօտ։ Հայր սուրբը, տեղ հասնելուն պէս, իսկայն գնաց, ներկայացաւ նորին սրբազնութեան ու յայտնեց, որ Քեանդեազրմազ հայր սուրբի փոքրաւոր Յովհաննէս Ծաղկոցեցուն բերել է աքեղայ ձեռնադրելու համաձայն առաջադրութեան նորին սրբազնութեան։ «Չատ բարի, շատ բարի, հայր սուրբ,—ասաց սրբազանը,—լաւ էր արել։ Վաղը բերէր. տեսնեմ ձեր այդ փոքրաւորը ինչքան հմուտ է»։—«Ծառայ եմ կամօքիդ, հայր սրբազան», —պատասխանեց Ստեփաննոս հայր սուրբը, առաւ սրբազանի աջն ու դուրս գնաց սենեակից։

Գալով Յովհաննէսի մօտ, հայր սուրբն ասաց նրան. «աղա, էգուց սրբազանը քեզ քննութիւն պտի անիլ. նստի՛ էսօր կրկնողութիւն արա՛, պատարագի արարողութիւնները լաւ սերտի»։

Յովհաննէսը նստեց սերտելու, իսկ Ստեփաննոս հայր սուրբը գնաց հարկաւոր մարդկանց տեսնելու։ Յովհաննէսի գլուխը մեռնի, նրա վրայ յոյս դնել չէր կարելի, պէտք էր մարդկանց տեսնել. առանց այդպիսի տեսակցութիւնների գլխամեռի ձեռնադրութիւնն անհնարին բան էր։ Միւս օրն առաւօտեան Ստեփաննոս հայր սուրբը վերցրեց Յովհաննէսին ու գնաց սրբազանի մօտ։ Հայր սուրբը պատուիրեց նրան, որ նա խտտի ¹⁾ վանքից բերած գառն ու այնպէս մտնի սրբազանի սենեակը, չօրի նորին սրբազնութեան առաջին, աջն առնի ու իր անմեղ նուէրը դնի նրա առաջին։ «Այդ սիրուն գառը կը լինի ապացոյց ըո սրտի մաքրութեան», —աւելացրեց հայր սուրբը։ Երբ մտան սրբազանի սենեակը, Յովհաննէսը չո-

¹⁾ Գրկում բռնի։

քեց նրա առաջին, ցած դրեց պառն, առաւ սրբազանի
աջն ու անպէս գլուխը գետնին խոնարհեցրած մնաց նրա
առաջին չորած:

— Կանգնիր, տիրացու, կանգնիր, — ասաց սրբազա-
նը, — կարդալ-դրելը գիտես:

— Գիտեմ, սրբազան հայր, — պատասխանեց Յովհան-
նէսը, — ամա որ հարցնի, ես էս ո՞նց կանեմ, — մտածեց նա:

— Քերականութիւն սովորել ես, — հարցրեց սրբա-
զանը:

— Այո, սրբազան հայր, — պատասխանեց Յովհաննէ-
սը, մտքումն ասելով «տեսնաս, էդ զահրիմար քերակա-
նութիւնը էդ ի՞նչ զատ ա, որ սրբազանը հարցնում ա. չը
լինի, թա դա էլ մի նոր աղօթք ա»:

— Ո՞ւմ մօտ ես սովորել քերականութիւնը, տիրա-
ցու, — հարցրեց սրբազանը:

— Քեանդեագրմեազ հայր սուրբի մօտ, սրբազան
հայր, — պատասխանեց Յովհաննէսը:

— Ա՛ ուրեմն դու պէտք է լաւ իմանաս քերականու-
թիւնը, — ասաց սրբազանը, Քեանդեագրմեազ հայր սուր-
բը գիտնական մարդ է: Ապա, տիրացու, — դարձաւ նա
Յովհաննէսին, — կրկնի այս նախադասութիւնը՝ «հովիւ
քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց»: Յովհաննէսը
վայ էն հալին կրկնեց:

— Այժմ ասա, — շարունակեց սրբազանը, — «ոչխա-
րաց» բառը եղակի է, թէ յոգնակի:

— Տէր Աստուած, քե մատաղ, տեսնաս էս ի՞նչ ա
հարցնում ինձ, — մտածեց Յովհաննէսը, — չը լինի, թա
մեր վանքի եղանց մասին ա հարցնում. ահր սա եղների
հետ ի՞նչ բան ունի, սրբազան մարդուն վար անիւն ինչ
կը սաղայ:

— Հը՛, ասա՛ «ոչխարաց» եղակի է թէ յոգնակի, —
կրկնեց սրբազանը:

Յովհաննէսը մնացել էր պապանձուած:

—Մինն ասի,—մտածում էր նա,—սրբազան հայր, ձեզնի ի՞նչ ես անում, որ եղանց մասին հարցնում ես. ահր ոչ վարող ես, ոչ հնձող. էնա ծլպատակ տեղդ դինջ նստի, աջդ սրա-նրա դրդի ¹⁾ դէմ արան, պաշնն ու ա- ջահամբուր տան, դու էլ կեր, խմի ու քէֆ արան. էլ ե- ղանց մասին հարցնում ես, ի՞նչ անես, նրանց հետ ի՞նչ դարդ ունես:

—Հը՛, տիրացու,—կրկնեց սրբազանը,—այժմ ասան՝ «ոչխարաց» շատ ոչխար անշահակում, թէ մի հատ ոչխար:

—Ատա ըղորմի ²⁾ քու հօրը դէ հրետին ասան է,— մտածեց Յովհաննէսը,—փորացաւո՛ւ նոր հասկացայ. ես էլ ասեմ, խի՛ ա քերականութենի եախէն բռնել ու էլ բաց չի թողնում. դու մի ասիլ սա ինձ գրաբաւ հարց- նում ա՛՝ ոչխարներ ինձ համար շատ էք բերել, թա հէնց էս մինն ա:—Սրբազան հայր, ծառայ եմ կամրիդ,—ա- սաց բարձրաձայն Յովհաննէսը, ոչխարը մինն ա, մինը:

—Ո՞նց թէ մինը. ահր ասած է՝ «ոչխարաց», լաւ մտածիր:

—Սրբազան հայր, դէ մենք ոչխարը մինն ենք բե- րել ձեզ համար. եթէ իմանայինք շատ էք ուզում, շատ կը բերէինք, այլ ոչ թէ միայն էս մինը,—ասաց Յով- հաննէսը, ցոյց տալով բերած գառան վրայ:

Սրբազանը բարձրաձայն ծիծաղեց, շատ ծիծաղեց, ձեռքով նշան արաւ Յովհաննէսին, որ դուրս գնայ: Ստե- փաննոս հայր սուրբը մնացել էր լուռ կանգնած. ի՞նչ ա- սէր նա սրբազանին. գլխամեռ Յովհաննէսը նրան ու Քեան- դեագրմեազին սկսեցին արաւ սրբազանի առաջին: «Ստե- փաննոս հայր սուրբ,—դարձաւ նրան սրբազանը,—ձեք արեղացուն շատ զուարճացրեց մեզ, նա շատ միամիտ է

¹⁾ Բերանին: ²⁾ Ողորմի:

լծում ինձ. նրան հարկաւոր է դեռ քերականութիւն սովորել, բայց ի՛նչ արած, Քեանդեագրմեազ հայր սուրբի խնդիրքը չեմ կարող մերժել, պէտք է ձեռնադրել. գնացէք ու պատրաստեցէք նրան վաղուան հանդէսի համար: Ստեփաննոս հայր սուրբը համբուլեց սրբազանի աջն ու դուրս գնաց նրա սենեակից:

2.

Միւս օրը մեծ հանդէսով կատարուեց Յովհաննէսի ձեռնադրութիւնը: Սկզբից մինչև վերջը նա իրան զգում էր մի տեսակ կախարդական աշխարհում: Նա բոլորովին չէր հասկանում, թէ ի՛նչ է կատարւում իր հետ, ի՛նչ է նշանակում այս կամ այն ծէսը, այս կամ այն խորհուրդը: Նա գիտէր միայն, որ այդ բոլորը կատարւում է նրան «վրդապետ շինելու համար», բայց թէ ինչո՞ւ համար են «վրդապետ շինում», ի՛նչ նպատակով, ի՛նչ մտքով,—այդ նրան այնքան էլ չէր հետաքրքրում: Քեանդեագրմեազ հայր-սուրբն ասեց՝ «գնա՛ վրդապետ դա՛ռ», նա էլ եկել է «դառնում», էլ իր ի՛նչ գործն է, թէ ինչու համար է դառնում: «Ա՛խ, ա՛ Քիբ, ա՛ գլխամեռ,—մտածում էր նա, —էդ սրտեղ ես, մի եկ, թամաշա արա՛, տես էստեղ քու Հանէսի գլխին ինչ օյին են դնում է՛: Հանդէսը շարունակւում էր. Յովհաննէսի համբերութիւնը հատնում էր: «Դէ թա ինձ վրդապետ են շինում,—մտածում էր նա,—էն զահրիմար պօպօղը ¹⁾ խի՛ չեն գլխիս դնում. հարա, հարա, էհէհէց գլխաբաց բաց թողնեն, գնամ վանքը, ու մեր տղէրը անումս անպօպօզ վրդապետ դնեն. չէ, ես էդհէհէց սարսաղ չեմ. եթէ էդհէ բան պատահի, կը գնամ Աշառի ծմակումը գաղլու կենամ, էլ վանքը կոխիլ

¹⁾ Վեշարը:

չեմ, մինչև պօպօզ չի դնեն գլխիս»։ Վերջապէս պօպօզը դրան Յովհաննէսի գլխին, և նա տեսաւ, որ ճշմարիտ ինքը վարդապետ է, որ այլ ևս փոքրաւոր Յովհաննէսը չի, որին Քեանդեազըմեազ հայր սուրբը դեռ երէկ-մէկել օրը օրհնուած մհակով աջ ու ձախնի էր պրանում։

Է.

Յովհաննէսը, հայր սուրբ դարձած, վերադարձաւ վանք, ուր մեծ շքով նրան հանդիպեցին։ Քեանդեազըմեազ հայր սուրբը տուեց նրան իր աջը, օրհնեց նրան ու ներկայացնելով վանական ժողովուրդին, ասաց. «Սիրելիք, ահա ձեզ մի նոր հովիւ. սա այլ ևս Հանէս փոքրաւորը չէ, այլ Յովհաննէս հայր սուրբը։ Հոգին Սրբի շնորհը իջել է սրա վրայ. եկէք ու առէք սրա աջը։ Հորթաւած, գառնարած, տաւարած ու այլ վանականք մօտեցան Յովհաննէսի աջն առնելու։ Նախըջի Քիբին, իրը մօտեցաւ աջն առնելու, կամաց ձայնով ասաց.

— Ադա, պօպօզդ շնորհաւոր ըլի։

— Ապրնս, ա՛ Քիբ, — պատասխանեց Յովհաննէս հայր սուրբը, — զօգնութեամբն զքո զստացեալ եմ դայս։

— Ադա, ա՛ գլխամեռ, — ասաց Քիբին, — էդ ա կարգին գրաբառ ես խօսում. որ հէնց ա՛ շիտակ վրդապետ ես։

Երբ Յովհաննէս հայր սուրբը վերջացրեց իր քառասունըր, Քեանդեազըմեազը պատուիրեց նրան պատարագ մատուցանել. այդ նրա անդրանիկ պատարագն էր։ Նշանակուած օրը շրջակայ գիւղերից վանքում հաւաքուել էր մեծ բազմութիւն նորընծայ արեղայի անդրանիկ պատարագին ներկայ գտնուելու համար։ Յովհաննէս հայր սուրբը զգեստաւորուած դուրս եկաւ խորանից. հարկաւոր աղօթքները վայ էն հալին կմկմաց ու բարձրացաւ սեղան նախըջի Քիբիի հետ միասին, որը նրան դալըութիւն էր

անում:

—Ա՛ Բիր, քե մատազ,—ասաց նա ցածր ձայնով Քիրուն,—հէնց արա՛, որ ես սներես չի մնամ: դու աղօթքների տակից-գլխից վրայ գցի, մնացածը ես սուտ ա, ըղորթ ա, կասեմ, մի հանգաւ կը կամեցնեմ:

—Արխալին կաց, հայր սուրբ,—պատասխանեց զըպիրը,—Քիրին միթէ մեռել ա՛, որ դու սներես մնաս:

Սկսուեց պատարագը: Հայր սուրբը, ինչ որ խելքը կտրում էր, ասում էր: Վերևում Քիրին էր եօլա տանում, իսկ ներքևում հորթարած Պօղոսն իր խմբով: Քեանդեագրմեազ ու Ստեփաննոս հայրերը, ամենքն իրանց դասում կանգնած, լուռ լսում էին նորընծայի պատարագը: «Լալկվէք դուք, ոնց լալկվել էք,—ասում էր նրանց հասցէին ինքն իրան պատարագիչը,—եանի մի բան էլ դուք ասեցէք էլի: Ի՛նչ էք այդտեղ տազ արած՝ կանգնել ու աչքերնիդ ուստա ¹⁾ դայլերի պէս վրաս ցըցել: Դի՛ ա տեսած, որ խամ քուռակին մէնակ կալ լծեն, ոնց դուք ինձ լծել էք»: Քիրին շարունակ վրայ էր գցում: Նորընծան էլ շարունակ սխալւում էր: Մի անգամ, երբ Քիրին ասեց «Օրհնեա՛, աէր», նորընծայ պատարագիչը, փոխանակ, ինչպէս պահանջւում էր այդ դէպքում, ժողովրդին դառնալու ու «խաղաղութիւն ամենեցուն» ասելու, ձեռքերը բարձրացրեց վերև ու սկսեց ձայնով «Եւ Յիսուսի Քրիստոսի...»: Քիրին, իսկոյն նկատելով սխալը, ասաց հայր սուրբի ականջին՝ «ա՛ գլխամեռ, էդ չի, էդ չի: ասա՛ խաղաղութիւն ամենեցուն»: Հայր սուրբը, մի անգամ էլ կրկնելով «Եւ Յիսուսի Քրիստոսի... կանգ առաւ այդ խօսքերի վրայ ու աւելացրեց գլուխը կորցրած՝ չէ ամա, էս չի... խաղաղութիւն ամենեցուն,—դարձաւ նա ժողովրդին: Սուրբ հայրերը ներքևում իրար

¹⁾ Վարպետ:

երեսի նայեցին, շարժեցին գլուխները, բայց էլ ինչ կարող էին անել, իրանք էլ էին տեսնում, որ արջին կալ են լծել, Յովհաննէս հայր սուրբը սեղանի վրայ իր դիրքը համարեա չէր փոխում. բոլոր ժամանակ ձեռքերն ու գլուխը վերև բարձրացրած իբրև թէ աղօթում էր, այն ինչ մտքումն անիծում էր այն օրը, երբ նրան վարդապետ շինեցին, էլ թող չարին, որ գնայ այս անցաւոր աշխարհում իր արևի ձէնն ածի ¹⁾։ Քիբին, նկատելով այդ, մօտեցաւ նրան ու ասաց ականջին. «Ա տուն կրակ ընկած, ինչ ես ձեռքերդ չարդախ արել, ինչ ա, կարծում ես, թա վերևից ոսկի պտեն թավիլ գլխիդ. ահա մի կէնդ-կէնդ էլ առաջիդ գրքին եաշի, որ գոնէ ներքևից կարծեն, թա աղօթքներ ես կարդում է»։

—Ահր կարում եմ, որ կարդամ. թող մի, տեսնամ գլխիս ինչ հողն ու ցիւնն եմ տալիս է,—անբաւականութեամբ պատասխանեց նրան հայր սուրբը։

—Քե թաղեմ, քե, ա քաշալ գլխամեռ, քեզ պատարագ անել տալը թամամ արջին կալ լծելը դարձաւ,—ասաց Քիբին ու շարունակեց եօլա տանել։

Վերջապէս մի հանգաւ Յովհաննէս հայր սուրբը պատարագը վերջացրեց ու ցած իջաւ Յովհաննու աւետարանը կարդալու։ Ասում ենք կարդալու. ահա ո՞նց կարդար խեղճ հայր սուրբը. կարդալը նրա բանն էր. Աչառի ծմակի համալսարանումը Քիբի գլխամեռը նրան կարդալ է սովորեցրել, որ նա կարդայ. մի տետրն ունէր, էն էլ տրամեռ Ջամամ կովը լաւաշի հետ կերաւ, մաքրազարդեց։ Ճար չի կար, պէտք էր եօլա տանել. սկսեց՝ «Եւ ի սկզպեանն էր պեանը՝, և պեանն էր առ Աստուած... ը՛ ը՛ ը՛ ը՛ ը՛ ը՛..... Անաստասին ասեցէք տազ անի՛...²⁾»,—միջանկեալ աւելացրեց հայր սուրբը, ականար-

¹⁾ Իր համար ազատ ազրի։ ²⁾ Սուս կենայ։

կելով եկեղեցու դրսում բարձրաձայն խօսող անցքանեցի Մնաստասի վրայ ու էլի շարունակեց կմկմացնել, — ը՛ր՛ ը՛ր՛, — չոռ, չոռ, — ասում էր ինքն իրան Քիբին ու խընկարկում նորընծային. ժամաւորներն ու սուրբ հայրերը մնացել էին իրար երեսի նայելիս, — ը՛ր՛ ը՛ր՛ և Աստուած էր պեանը... ը՛ր՛ ը՛ր՛...» Այդ միջոցին հակառակի պէս հայր սուրբի ձեռքից մոմը կաթեց ու ծածկեց մի ինչ որ գլխատառ «Եւ». հայր սուրբը ձեռքի խաչով բերեց մոմը, որ «Եւ»-ը գտնի, բայց թուղթը պատռեց ու «Եւ»-ը բոլորովին անհետացաւ, իսկ նրա տակից, գրքի միւս երեսից, մի բոլորովին այլ բան երևաց հայր սուրբի աչքին. Խեղճը բոլորովին գլուխը կորցրած շարունակեց ընթերցանութեան եղանակով ինչ որ բերանն եկաւ, հարցնելով կողքում մոմը պահող հորթարած Պօղոսից՝ «Պօղոս ջան, «Եւ»-ը ո՛ր ա՛, տրամեռը կորաւ, էլ երևում չի, ը՛ր՛ ը՛ր՛ ը՛ր՛...»։ Հայր սուրբ, լաւ եաշի «Եւ»-ը պատռեցիր, վրայ բերից Պօղոսը։ «Ադա՛, — շարունակեց հայր սուրբը, — անտէրի տակէն էն ա հրէ մի ուրիշ գատ ա երևում, էն էն ի՛նչ ա՛, աչքս լաւ չի տեսնում, մի ասա՛ ի՛ սէր Աստուծոյ...» — «Եւ ընդ հոգոյդ բնւմ», — վրայ բերեց Քիբին ու խնկարկելով մօտեցաւ հայր սուրբին, աչքերով նշան անելով, որ հրետին աւետարանը ծածկի. հայր սուրբը ծածկեց, ու ժամը վերջացաւ։

Երբ ժողովուրդը ցրուեց, Քեանդեաղղմեազը սաստիկ յանգիմանեց Յովհաննէս հայր սուրբին. ու խստիւ պատուիրեց, որ այլ ևս համարձակուի ոչ պատարագ առնել. «Ես էլ հէնց էդ եմ ուզում, հայր սուրբ, — ասաց մտքում Յովհաննէս հայր սուրբը, — պատարագն իմ ի՛նչ պեանն ա. էս զահրիմար պօպօզը բերել էք գլուխս պըրծացրել, բաւական չի, դեռ ստիպում էք պատարագ էլ անել»։

Ը.

Դրանից յետոյ ոչ ոքի մտքով չէր անցնում Յովհաննէս հայր սուրբին պատարագ պատուիրել, իսկ նրա մըտքով իս պռակել չէր անցնում սեղան բարձրանալ պատարագչի զգեստով: Ժամասացութեան ժամանակ փիլոն էր ծածկում ու մի անկիւնում սուս-փուս կանգնում. երգեցողութեան ժամանակ ձայն էր պահում. այդ էլ մեծ բան էր, որ նա անում էր: Ո՞ր քարին տար գլուխը խեղճ հայր սուրբը. նա ժամ ասէ՛ր, գիրք կարդա՛ր, թէ տնտեսութեամբ պարապէր, որն այժմս գլխաւորապէս ծանրանում էր նրա վրայ: Մտեփաննոս հայր սուրբը միայն հըսկում էր ու հրամաններ տալիս նորընծային: Նա մեծ առաջադիմութիւն էր ցոյց տալիս իւր ու պանիր շինելում, իսկ միւս տեսակի առաջադիմութեան մասին խեղճին ժամանակ չէին տալիս մտածելու անգամ: Մի անգամ, յունիս ամսին, սրբազանը հիւր եկաւ Թարգմանչաց անապատը: Նրան ընդունեցին մեծամեծ հանդէսներով. Ժողովըրդի մեծ բազմութիւն եկաւ նրա աջն առնելու ու օրհնութիւնն ստանալու: Մի առաւօտ սրբազանը վարդապետների ու քահանաների հետ միասին նստած վանքի մեծ թիթենու տակ կաթնով ու մեղր-կարագով թէյ էր վայելում: Տաւարը արօտատեղից նոր էր վերադարձել վանք. արխաջը ¹⁾, ուր Յովհաննէս հայր սուրբն ու նախրչի Քիքին կլթում էին կովերին ու կաթնով լիբը կլթիչները տանում ու թափում էին տնտեսատան չարխի դազանի ²⁾ մէջ: Հեռուից նկատելով Յովհաննէս հայր սուրբին կլթիչը ձեռքին, սրբազանը հրամայեց կանչել նրան իր մօտ: Քահանաներից միին իսկոյն գնաց Յովհաննէսի ետևից ու տնտեսատան շէմքումը կտրեց նրա առաջն, ասելով. «Սրբազանը քեզ կանչում ա»:

¹⁾ Տաւարի կանգնելու տեղը: ²⁾ Մեծ կաթսայի:

— Ի՞նչ ա անում ինձ սրբազանը, — հարցրեց դարմացմամբ հայր սուրբը:

— Գիտում չեմ, — պատասխանեց քահանան, — ասեց՝ կանչեցէք արեղային. եկ, գնանք, էլ ի՞նչ ես կանգնել:

— Տէր Պօղոս, եկ դրուտոն ասա, դու կը գիտառ, չը լինի սրբազանն ուզում ա ինձ քննութիւն անի:

— Էդ նրա բանն ա, հայր սուրբ, ուզի կանի, չուզի, չի անիլ. դու եկ, գնանք:

— Դէ որ էդհէնց ա, թող գնամ վեղարս գլխիս դնեմ:

— 2է, վեղարը հարկաւոր չի. ասել ա՝ թող այնպէս կլթիչը ձեռքին դայ:

— Ա՛՛ երէց, թող գնամ վեղարս ծածկեմ:

— 2է, հէնց էդհէնց եկ գնանք, — ասաց տէր-Պօղոսն ու ըռնեց հայր սուրբի փէշից:

— Տէր մեղայ քեզ Աստուած. ա՛ երէց, թող գնամ էր զահրիմար պօպօզը գլխիս պրծացնեմ, երբ էն անտէրը գլխիս լինի, իմ առաջը քօթուկ ¹⁾ գցող չի ըլի:

— Ա՛՛ գլխամեռ, եկ, ամօթ ա, ուշանում ենք, սրբազանն էլ մարդ կուղարկի, — ասաց տէր-Պօղոսն ու քաշեց հայր սուրբի փէշից:

Խեղճը ճարը կտրած կլթիչը ձեռքին գնաց նրա յետևից, գնաց, ուղղակի իրա սրբազանի պայծառ աչքերի առաջին կանգնեց: «Եթէ մի փեանդ ²⁾ չը բանեցնեմ, ես կորած եմ», — մտածեց Յովհաննէս հայր սուրբը, խորը գլուխ տալով սրբազանին: «Աբեղայ, — ասաց սրբազանը, — կարծում եմ, որ այժմս պիտի բաւականին յառաջադիմած լինես քերականութեան մէջ. արա՛, ասա, տեսնեմ...» — «Տրամեռ. քերականութէնի անումն էլ տուաւ. դէ, եա բաղդ», — մտածեց հայր սուրբն ու, յանկարծ կրտ-

1) Փայտ: 2) Հնար:

րելով սրբազանի խօսքը, ասաց. «Սրբազան հայր, ծառայեմ կամքիդ, [Ժոյլ տուէք մի առաջ ես ձեզ մի բան հարցնեմ իմ քերականութենէն»։ Բոլորն էլ ապշած նայում էին. Քեանդեազրմեազը մտքումն ասում էր՝ «Վա տափ, դու ճղվի ¹⁾», ես մէջդ ընկնեմ, էս գլխամեռը մեզ խայտառակելու ա»։ Սրբազանն էլ սկզբում զարմացաւ ու խոժոռ հայեացք ձգեց յանդուգն արեղայի վրայ, բայց խօսկոյն ծիծաղաղէմ դարձաւ նրան, ասելով՝ «Չատ հետաքրքիր է այդ, շատ հետաքրքիր է. հարցրու, արեղայ, մի քաշուիր»։ Յովհաննէսն իսկոյն դրաւ կաթնով լիքը կ[թիշը սրբազանի առաջն ու հարցրեց. «Ասացէք, սրբազան հայր, էս կաթը տարուայ չորս եղանակներին, դարնանը, ամառն, աշունն ու ձմեռը մի տեսակ համ ու սննդարարութիւն ունի, [Թէ զանազան»։ Սրբազանը չը պատասխանեց, [Ժողներով հայր սուրբին բացատրել. նա բացատրեց. «Ասացէք, սրբազան հայր, կաթնից ո՞նց պէտք է իւր ու [Թան պատրաստել»։ Սրբազանը մնաց լուռ. հայր սուրբը բացատրեց ու էլի համարձակութեամբ շարունակեց. «Ասացէք, սրբազան հայր, [Թանը ո՞նց պէտք է կտրցնել որ [Թանձրանայ. կաթնից ո՞նց պէտք է պանիր շինել»։ Սրբազանը մնաց տաղ արած. հայր սուրբն այդ էլ բացազրեց, նորին սրբազնութեան գոհունակութեան արժանանալով, որը մի քանի անգամ ասաց. «չատ լաւ, շատ լաւ, արեղայ, լաւ տնտեսագէտ ես երևում»։ Քաջալերուած դրանից Յովհաննէս հայր սուրբը շարունակեց. «Ի՛հ, սըրբազան հայր, էդ իմ փեշակն ²⁾ ա, և դուք տեսնում էք, որ ես լաւ եմ իմանում. էն քերականութիւն իմանալը, գրել-կարդալն ու ժամ ասելն էլ ձեր փեշակն ա, դուք լաւ իմացէք, էլ ինձանից ի՞նչ էք ուզում»։

Սրբազանը բարձրաձայն ծիծաղեց. վարդապետներն

1) Պատուիր։ 2) Արհեստ։

ու քահանաները հետևեցին նրա օրինակին ու երկար, շատ երկար ծիծաղեցին բոլորն էլ: Սրբազանը, դառնալով Յովհաննէս հայր սուրբին, ասաց. «շատ զուարճացրիր մեզ, աբեղայ. դնա՛ այժմ հանգիստ քո փեշակով պարապիր. այսուհետև էլ քեզ քերականութիւնից չեմ քննիլ»: Յովհաննէսը կ'ընչը վերցրեց սրբազանի առաջից ու յալթական հայեացք ձգելով շրջապատողների վրայ, արձակհամարձակ դնաց տնտեսատուն, ուր պատմեց իր մտերիմ Քիբուն տարած յաղթութիւնը:

— Ադա՛, — ասաց Քիբին, — ըզհէնց որ դու սրբազանին յաղթել ես, նա քեզ ծայրագունութիւն ¹⁾ ա տալու:

— Ծայրագունութիւնն ուզում չեմ, ա՛ Քիբ, — ասաց Յովհաննէս հայր սուրբը, — ինչս պէտք ա աւելանայ. շատ, շատ անմիտ մի զահրիմար «ծ» պէտք ա կ'պցնեն, չէ, էդ պէտքը չի, միայն թա էն անտէր քերականութէնից էլ քննութիւն չանի սրբազանը, — ասաց ու կաթը թափեց չարխի ղաղանի մէջ:



Անցան տարիներ: Ստեփաննոս վարդապետը վախճանուեց: Նրա մահն անբուժելի վիշտ պատճառեց Քեանդեագրմեազին, մի հոգեմաշ վիշտ, որը շուտով նրան էլ տարաւ գերեզման: Թարգմանչաց անապատը մնաց Յովհաննէս հայր սուրբին, որը ստանձնեց վանահօր պաշտօնը: Ջատ դժուարացաւ խեղճ հայր սուրբի բանը. նա պէտք էր համ ժամ ասէր, համ պատարագ անէր, համ էլ անտեսութեամբ պարապէր:

Սկզբում հայր սուրբը գլուխը կորցրեց, բայց էլի շուտով իրան հաւաքեց. ժամն ասում էր, պատարագն

¹⁾ Ծայրագոյն վարդապետի կոչում:

արձուկ-համարձակ անում էր, Քեանդեազըմեադն այլ ևս չկար, որ նրան յանդիմանէր։ Հայր սուրբի միրուքը սպիտակացել ու բաւականին երկարացել էր։ Վանքի ծառայողներն ու ժողովուրդը այժմս պատկառանքով էին վերաբերում նրան. էլ մարդ չէր լինում, որը յանդգնէր նրա մօտովն առանց «Աստուած օգնականի» անցնել։ «Աստուած պահապան, որդի ջան», կասէր այդպիսի դէպքում հայր սուրբն ու հարց ու փորձի կենթարկէր պատահողին. «Իրտեղացի է, ո՞նց է ապրում, ո՞նք ընտանիք, տուն-տեղ, ապրուստի միջոցներ և այլն»։ Եթէ նա կարօտ էր լինում խորհուրդների, հայր սուրբը խորհուրդներ էր տալիս նրան, խրատում էր հայրաբար. եթէ կարօտ էր լինում կենսական միջոցների, հայր սուրբը առատաձեռն օգնութիւն էր ցոյց տալիս նրան վանքի շտեմարանից ու անտեսատնից։ Անտուն-անտէրը վանքում միշտ օթեան էր գտնուում։ Առաջ էլ այդ կար, բայց Յովհաննէս հայր սուրբի օրով աւելի մեծ ծաւալ ստացաւ հինաւուրց մեծաստանի հիւրընկալութիւնը։ Վանքի շտեմարանների դռները միշտ բաց էին բոլոր չքաւորների, անտուն, անճար ու անիլլաջների առաջ. ամեն ոք օգնութիւն էր ստանում, ոչ ոք «չէ» չէր լսում Յովհաննէս հայր սուրբից։ Պատահում էր գիւղացուն դժբաղդութեան մէջ ընկնել, եղը կորցնել, կամ կովը ծախել վաշխառուից ազատուելու համար. խիզանը սովում էին ու սկսում «հաց, հաց» աղաղակել,—նա վերցնում էր պարկը ու գնում վանքը Յովհաննէս հայր սուրբի մօտ, ասելով. «Հայր սուրբ, կարգիդ մատաղ, խիզանս սոված կոտորւում են, մի-երկու խոն ցորեն տուր եօլա գնամ մինչև հունձը. երբ արտս հնձեմ, ցորենը կը վերադարձնեմ քեզ կրկին»։ Հայր սուրբն առանց երկար ու բարակ մտածելու տանում էր գիւղացուն շտեմարան, լցնում էր նրա պարկը ցորենով ու ճանապարհ դնում, ասելով. «տար, որդի ջան»։

Թէ կը վերադարձնես—մարմնուս, Թէ ոչ—հոգուս: Այդպէս ու այդ խօսքերով էր միշտ ճանապարհ գցում հայր սուրբը բոլոր իրան դիմողներին: Երբ վանքից ստացած օժանդակութիւնը չէին վերադարձնում, նա բոլորովին չէր տրտնջում և ասում էր. «էն հոգուս համար էր, հալալ լինի իրան, տանողին»: Լսում էր երբեմն հայր սուրբը, որ այս ինչ գիւղում, այս ինչ ընտանիքի միակ աշխատող տղամարդը մեռել է, որբերին կերակրող չը կայ, Թշուառութիւնը ծայրահեղ է. նա իսկոյն գնում էր ու օգնութեան հասնում խեղճերին: Նրանց հայր սուրբը լոկ խօսքերով չէր մխիթարում, ոչ. խօսքերով մնց մխիթարէր, երբ նա խօսելու շնորհ չունէր, քերականութիւն չէր սովորել ահր. նա սփոփում էր նրանց վիշտը գործով, մխիթարում էր նրանց իր հայրական օգնութեամբ. սովածին հաց էր տալիս, մերկին շոր, աշխատանք փնտռողին աշխատանք. վանքի կալուածներում աշխատող ձեռքերի պահանջ զգացւում էր միշտ: Մերժել հայր սուրբը չը գիտէր. նրա սրտի գութն ու բարութիւնն անսահման էին. նրան դիմում էին անընդհատ, և նա բոլորին էլ բաւարարութիւն էր տալիս: Գարնան սկզբներին գալիս է նրա մօտ հարստահարուած շինականն ու ասում. «Հայր սուրբ, կարգիդ մատաղ, տասը խոն սերմացու ցորեն էի յետ քաշել իմ երեխանց բողազից, որ էս գարնանը սերմեմ. Կողունց Մակին եկաւ երէկ ստարշինի ¹⁾ հետ միասին տունըս, զօռով ցորենս ամբարից դուրս տուաւ ու պարտրիս տեղը տարաւ. նրան քսանհինգ մանէթ փող էի պարտ, երկու անգամ աւելի ինձանից շահ ²⁾ վերցրած կը լինէր, բայց չը նայած դրան, եկաւ ցորենս էլ տարաւ, տասը մանէթ միայն պակասացրեց մայից ³⁾ ու տասնհինգ մանէթի թուղթ տուաւ: Լաց ու կոծով աղաչեցի, պաղա-

1) Տանուտէրի: 2) Տոկոս: 3) Մայր գումարից:

տեցի, որ մինչև աշունքն սպասի, այն ժամանակ քսանհինգ մանէթն իրան շահով կը տամ, չը լսեց, դեռ ուշունց էլ տուաւ, իսկ ստարշինն էլ մի լաւ գլուխս թակեց: Հայր սուրբ, ես քո սուրբ կարգին մատաղ, դէ հմի մի տասը խոն ցորեն տուր, տանեմ, սերմեմ, իմ ճար ու իլլաջը հիմա դու ես»: Հայր սուրբն իսկոյն տանում էր գիւղացուն շտեմարանը, չափում ցորենը նրա չուալի մէջն ու ասում «տար, որդի ջան, տար, սերմի. եթէ Աստուած քեզ կը տայ, դու էլ հայր սուրբին կը տաս. իսկ եթէ ոչ, քեզ ու քո քիւլիաթին ¹⁾ հալալ»: Գիւղացին չալակում էր ցորենի չուալն ու Աստուծուն փառք տալով հեռանում վանքից: Պատահում էր գիւղացուն գալ հայր սուրբի մօտ այս խօսքերով՝ «հայր սուրբ, ծառադ եմ, տունս քանդուած ա, օգնիր ինձ. ստարշինը չովուշով ²⁾ տանս ինչ գտաւ, դուրս քաշեց տարաւ ծախելու, որ հարկս առնի, ասում ա՛ էլ կարող չեմ սպասել, . . . որդի, տուր, թէ չէ, ինչ որ ունես, կը ծախեմ ու դեռ քեզ էլ տուն գցեմ»:

— Որդի ջան, ինչքան ա քեզ հարկ հասնում, — հարցնում է հայր սուրբը:

— Տասնութ մանէթ, հայր սուրբ, տուր ու փրկիր իմ տուն ու տեղը կորստից. կը գնամ Ղարա-Բուլաղում Ուսէփ-բէգի հանդին անձող ³⁾ կանեմ ու կը բերեմ պարտքըս տամ:

Հայր սուրբն իսկոյն հեռանում էր խուցի ամենամութ անկիւնը, շորերի տակից մի ինչ որ կապոց էր հանում ու անթիւ, անհամար փալասների միջից հանում էր փողն ու տալիս գիւղացուն ասելով «Տար, որդի ջան, ամա եթէ ձեռքդ աշխատանք ընկնի, չը մոռանաս հայր սուրբին. փողն էլ ետ նրան տուր, որ նա էլ ետ ուրիշի

¹⁾ Ընտանիքին: ²⁾ Գլխիւրով: ³⁾ Ածուխ:

տայ: Գիւղացին արտասուախառն աչքերով համբուրում էր դողդոջուն շրթունքներով հայր սուրբի աջը, ընդունում նրա ձեռքից փողն ու գնում իր տուն ու տեղն անողորմ տանուտէրի ճանկերից փրկելու:

—Ա՛ վրդապետ,—ասաց նրան մի անգամ նախըջի Քիթին,—դու էդ խալխին փխս ես սովրեցնում. էդ հէնց որ շարունակես, կը դան էս վանքի պատերն էլ ուտեն. հէնց աջ ու ձախ տալիս ես, էլ ոչ քոռ ես հարցնում, ոչ բաշալ, ոչ կաղ, ոչ սաղ. ահր մի բիշ էլ վանքի մասին մտածի է, էդ հէնց բան չի գալ, վանքը կը քանդվի:

—Ա՛ Քիթ,—պատասխանեց նրան հայր սուրբը,—ահր մեր նախահայրերն էս վանքը շինել են ժողովրդի համար: Եթէ մենք էն ուրիշ Փրանգստանում ուսում առած ուստա վարդապետների պէս ժողովրդից պլկենք, պոկենք ու նրան ոչինչ չը տանք, էլ վանքը կենում ա լինչ անի. լաւն էն չի, որ նա քանդուի: Ամա եթէ մենք ժողովրդին տանք, նա էլ մեզ կը տայ, ու վանքը երբէք չի քանդուիլ, հաւատացնում եմ քեզ: Երբ վճռեցին ինձ վարդապետ ձեռնադրել, Քեանդեագրմեազ ու Ստեփաննոս հայրերը, Աստուած նրանց հոգիները լուսաւորի, շատ և շատ իմաստուն խրատներ տուան ինձ: Քեանդեագրմեազն ասաց՝ «ա՛ որդի, դու ուսում չունիս, որ ժողովրդին իմաստութիւն սովրեցնես, պէտք է ուրիշ կերպով աշխատես նրան օգտաւէտ լինել. միշտ չէն պահիր այս հինաւորց մենաստանը ու միշտ օգնիր, խեղճին, թըշուառին, քո անբաղդ, հալածուած ու հարստահարուած եղբայրներին, իմացած լինելով, որ Աստուած քեզ կրկնակին կը տայ: Ստեփաննոս հայր սուրբն աւագ՝ «երբէք չասես ժողովրդին՝ պիւրէք, պիւրէք, որ ես տեղս դինջ նստած ուտեմ ու ձեզ համար աղօթեմ: Ի՞նչ օգուտ մարդկանց քո աղօթքներից, երբ դու նրանց ցաւերը թողնես անդարման. մի ձեռքով տուր, միւս ձեռքով միշտ կը

ստանաւ ժողովրդից, բայց երբէք չը պոկես նրանից, Թէն հոգևորականը ժողովրդի հովին է, բայց ժողովուրդը նրա կթի կովը չի, այդ լաւ խմանաս:

— Ըղորմի քեզ, ըղորմի, Ստեփաննոս հայր սուրբ, — ասաց Քիբին:

— Լիս դառնաս դու, Քեանդեազրմեազ, — աւելացրեց Յովհաննէս հայր սուրբը:

Ժ.

Խեղճ Յովհաննէս հայր սուրբ. տարուայ ընթացքում նա իսկի հանգիստ օր չունէր. Բացի վանքի գործերից նա զբաղուում էր նաեւ ժողովարարութեամբ: Հէնց որ ազատ ժամանակ էր գտնում, իսկոյն վերցնում էր Քիբուն ու սկսում գիւղից գիւղ ժողովարարութեան ման գալ: Ճշմարիտ է, հայր սուրբն ու Քիբին ժամասացութեան մէջ հմուտ չէին, բայց շիտակ միմեանց եօլա էին տանում. երբեմն պատահում էր, որ Քիբին «հաց բեր» էն պէնը հայր սուրբի միտն էր գցում, բայց այնպիսի վարպետութեամբ, որ ներկայ գտնուող ժողովուրդը զլսի չէր ընկնում, թէ բանն ինչումն է: Հայր սուրբը ժողովում էր իւր, պանիր, ցորեն, դարի, բրինձ, գլինի, լցնում էր այդ բոլոր բարիքներով վանքի շտեմարանն ու մառանը, որ յետոյ առատութեամբ աջ ու ձախ բաժանի: Երբեմն պատահում էր, որ Քիբին ձանձրանում էր ժողովարարութեան գնալուց ու ասում էր հայր սուրբին՝ «ա՛ վրդապետ, մենք էս ո՛ւմ համար ենք այսքան չարչարում. թող էս տարի էլ դինջ միւր անապատում նստենք»:

— Ա՛ Քիբ, — ասում էր հայր սուրբը, — մեր հոգու համար ենք չարչարում, մեր հոգու. պէտք ա չարչարուենք, որ յետոյ մեզ ըղորմի ասեն:

— Դէ որ հոգու համար ա, նկ, գնանք, ա՛ վրդա-

պետ, եկ, — ասում էր Քիբին ու գնում էշը փախանելու, որ ժողովարարութեան գնան:

Մի որ և է գիւղում քահանան հիւանդանում էր. ով էր եւթ տանում, հայր սուրբը: Ճշմարիտ է, նա ամեն կերպ խուսափում էր ժամ ասելուց, բայց երբ հարկը պահանջում էր, անտրտունջ կատարում էր իր պարտքը: Ամեն բանում մեծ հմտութիւն ձեռք բերեց հայր սուրբը, միայն ժամասացութեան կարգ ու կանոնը չը կարողացաւ լաւ սովորել. ահա նա մնաց սովորէր, երբ հազար ու մի դարդ ունէր: Մի անգամ Անցբան գիւղում տէր-Պօղոսը հիւանդացել էր. հակառակի պէս այդ միջոցին մի պսակ պատահեց գիւղում: Տէր-Պօղոսը մարդ ուղարկեց հայր սուրբի ետեւից, որ գայ, պսակի: Ո՛նց անէր խեղճ հայր սուրբը. թէ ասէր պսակ անելը գիտում չեմ, սաղալ չէր, խաբարը սրբազանին կը հասնէր. ճար չի կար, վերցրեց փոքրաւոր Վարդաղարին ու եկաւ գիւղը:

Պսակուող դոյզը մակարներով ¹⁾ շրջապատուած եկաւ եկեղեցի. հայր սուրբը շուրջառ ծածկած հանդիպեց նրանց: Սկսուեց պսակի արարողութիւնը. առանց երկար ու բարակ մտածելու հայր սուրբը հարսնացուի ձեռքը դրեց խաչեղձօր ձեռքում, ասելով՝ «տուեալ աջն Եւայի ընդ աջն Ադամայ»: արարողութիւնը շարունակվեց: Մակարներից մինը, նկատելով այդ, դարձաւ իր ընկերին, ասելով՝

— Արա, էդ վրդապետն էդ ինչ բանի ա. ահա փեւին թող արած հարսնացուին խաչեղձօր հետ ա պսակում. եկ, ասենք՝ հայր սուրբ, փեսէն դա չի, դա խաչեղձայրն ա, ինքն էլ դեռ պտակուած մարդ ա:

— Արա, — պատասխանեց նրան ընկերը, — տազ արա, հրեի վրդապետի պսակն այդպէս ա լինում:

1) Նորափեսայի ընկերներով:

Կարծելով, որ վարդապետի կատարած պատկն այդպէս է լինում, մականները լուռ հետևում էին արարողութեան: Փեսան ու խաչեղբայրն էլ մի բանի անգամ իրար երեսի նայեցին, բայց նրանք էլ չը բողբոջեցին: Հայր սուրբն իր խելքի կտրած շարունակում էր պատկը: Վարդապետը սպասաւորում էր. բանն արդէն եկաւ նաւորօտ կապելուն հասաւ: Հայր սուրբը կապեց նաւորօտը հարսի պարանոցից ու կնքեց խաչով, յետոյ վերցրեց միւս նարօտն ու գցեց խաչեղբօր պարանոցը: արդէն պատրաստուում էր նաւորօտը կապել ու կնքել, երբ յանկարծակի մտաւ եկեղեցին հարսնացուի հայրը ու, իսկոյն նկատելով բանն ինչումն է, մօտ վազեց, բռնեց հայր սուրբի ձեռքից, ասելով

—Մ' վրդապետ, էդ ի՞նչ բանի ես. ահր իմ աղջկան ես դրան չեմ տալիս, դա պատկուած մարդ ա, խաչեղբայրն ա, իմ փեսէն հրէս սն ա, սն,—ասաց, ցոյց տալով իսկական պատկուողին:

—Ատա, օրհնուած, դէ հրետին ասն է,—ասաց հայր սուրբը,—ահր քիչ էր մնում, թէ քեանդիրը ¹⁾ էդ գեադի ²⁾ ճիտն ³⁾ էի գցել: Ե՛, տէր-Պօղոս, դէ էս լաւ օյին ա, որ դու իմ գլխին ես դրել: ահր պսակ անեին իմ ի՞նչ բանն ա, մեր անապատում ո՞վ ա պսակում, որ ես պսակ անեին իմանամ:

Ո՞նց անէր, ո՞նց չանէր խեղճ հայր սուրբը. պսակը համարեա կատարուած վերջացած էր, բայց հակառակի պէս հարսնացուին պսակել էր խաչեղբօր հետ, իսկ իսկական փեսային հայվանի պէս այնտեղ կանգնած թողել: Տէրը մի արասցէ, եթէ սրբազանն իմանար, հայր սուրբի փիլոնը վրայից վեր կունէր ու կը խայառաւակէր: Միտք արաւ, միտք արաւ հայր սուրբը, բռնոթամանը

1) Թոկը: 2) Տղայի: 3) Պարանոցը:

հանեց գրպանից, մի երկու անգամ ակորժակով բռնոթի քաշեց ու յետոյ, դառնալով փոքրաւոր Վարդազարին, ասաց՝ ադա, ժամագիրքը ետ չդակի ¹⁾, էլ ետ գլխիցն սխիւ. փուչ անիծած, նկատեց նա Վարդազարին, — ես պառաւել եմ, աչքս լաւ չի տեսնում, դու էլա չը կարացիր ինձ հրեալին իմաց անես՝ բանն ինչումն ա. դեռ ուզում ես ձեր շինումն երէց դառնալ. ահր աշխատի պըսակ անելը սովորել, որ ետոյ ինձ սկերես չանես քա: Վարդազարը ժամագիրքը ետ չդակեց: Հայր սուրբը «տուեալ աջն Նւայի ընդ աջն Ադամայ» ասելով, դրեց հարսնացուի ձեռքը փեսայի ձեռքում ու նորից սկսեց պսակի արարողութիւնը, որը վայ էն հալին մի կերպ վերջացրեց:

Երբ գնացին հարսանքատուն, ջահիլ-ջհուլ տղէքը հայր սուրբի կատարած պսակով շատ զուարճացան: Հայր սուրբը նստած էր սուկիրի գլխին. նա լսում էր, ծիծաղում ու ինքն էլ էր զուարճախօսում: «Ա՛, ձեզ մատաղ, — ասում էր նա, — ես քանի քանի անգամ եմ ասել մեր տէր Պօղոսին, որ ես ժամ ասելու հետ գործ չունեմ, կարդալու պիտի չունեմ. թողէք հանգիստ իմ անապատում իմ խելքի կտրածն անեմ: Ես եմ գիտում իմ արած բանն ու իմ նախընտրի Քիւրին. մենք այնտեղ մեր անապատում ոնց ժամ ենք ասում, եօլա ա գնում, բայց էլի կարողանում չեմ ետխէս թափել մեր տէր-Պօղոսից, մնէլ ես տեսնում, բերում ա ու ինձ ըսէնց խաթի մէջ գցում: Հայր սուրբը իր պակասութիւնները ոչ մի տեղ և ոչ ոքից չէր ծածկում. պարզամտութեամբ խոստովանում էր իր բոլոր թերութիւնները: Հացկերոյթի սկզբում տանտէր Ներսէսը մի մի բաժակ արաղ առաջարկեց պատուաւոր հիւրերին. երբ բոլորն էլ խմեցին, նա մի բաժակ էլ ածեց ու կրկին առաջարկեց հայր սուրբին, ասելով՝

1) Բայց գրքի սկիզբը:

—Հայր սուրբ, կը կարաս էս մինն էլ խմել:

—Բա, մատաղ եմ,—պատասխանեց հայր սուրբը,—
[սի չեմ կարալ, մգամ ¹⁾] կարդալն ա, որ կարամ ոչ:

Ասաց, առաւ Ներսիսի ձեռքից բաժակն ու դատարկեց: «Ահ, —խօսեց հայր սուրբը,— ինձ բերել էք իմ ա-
նապատից, [թէ՛ հայր սուրբ, պսակ արա՛. պսակն իմ խնչ
բանն ա, ինձ պսակել են, որ ես պսակ անելն իմանամ:
Ինձ ասացէ՛ք՝ հայր սուրբ, գնա՛ շէնի աղբատների համար
ժողովարարութիւն արա՛, ձեռաց էշս փալանեմ ու գնամ
սար ու ձոր մանգամ, բան հաւաքեմ. հայր սուրբ, եկ,
մեր հիւանդին ակը տուր, դեղ ու դարման արա՛, ձեռաց
ապտիեկս առնեմ ու դամ»: Հայր սուրբը ոչ միայն բա-
րոյական, այլ և ֆիզիքական վէրքերին ու ցաւերին դեղ
ու դարման էր անում. նա իր հետ միշտ ման էր ածում
դեղորայքով լիքը մի արկղ, որը կոչւում էր «ապտիեկ»: Այդ
արկղում կային զանազան տեսակի դեղորայք հայր
սուրբի ձեռքով պատրաստած: Պատահում էր մէկին վի-
րաւորուել, իսկոյն հայր սուրբին իմաց էին անում. նա
գալիս էր իր ապտիեկով ու դարմանում վէրքը: Պատա-
հում էր մի գիւլում մի ծանր հիւանդ. մարդ էին ուղար-
կում հայր սուրբի յետեից. հայր սուրբը գնում էր բու-
ժելու. հիւանդը նրան տեսնելուն պէս [Թեթևութիւն էր
զգում. Եթէ հիւանդը չէր բժշկւում, մեռնում էր, հայր
սուրբը հոգոց էր ասում ու աւելացնում «այդ Աստուծոյ
կամքն էր. նա ստեղծել է, և նա տարաւ»: Ոչ որ նրա
վրայ չէր տրտնջում, և այդպիսով հայր սուրբի բժշկա-
կան վարկը չէր ընկնում:

Հոգեհացին հայր սուրբը, յիշելով անցաւորանց, մխի-
թարում էր մնացողաց: Ել տուն չը կար, որի անցեալն
ու ներկան նրան լաւ յայտնի չը լինէր, բանի որ ամեն

¹⁾ ՄԵԹԷ:

տան սուրբ հայրն էր նա: Մի անգամ Տէր-Վտիւանց տանը ժամահաց կար: Մեծ բազմութիւն էր այնտեղ հաւաքուել: Հայր սուրբը նստած էր սուփրի մէջ տեղը, իր աջ ու ձախ կողմերում ունենալով քահանաներին: Երբ սկսուեց խորհրդաւոր հացկերոյթը, հայր սուրբը վերցրեց դաւաթը, լցրեց զինով ու դարձաւ ժողովրդին, ասելով՝ «նա խալիսը ¹⁾», Աստուած ըզորմի էս տան անցաւորանց, Տէր-Վտիւանց հին ու նոր ննջեցեալանց:

—Աստուած ըզորմի,—միաձայն կրկնեց ժողովուրդը:

—Աստուած ըզորմի էս տան նախահայր Տէր-Վտիւսին,—շարունակեց հայր սուրբը,—նրա որդի Խաչատուրին, նրա որդի Աբրահամին, որին քիւրդերը սպանեցին Պիլօր հողում:

—Աստուած ըզորմի:

—Աստուած ըզորմի Ստեփան պապին, Աստուած ըզորմի Քեարիտ տատին ու նրանց որդեկերանց՝ Գրիգորին, Հանէսին, Մուքեկին ու Խաչատուրին:

—Աստուած ըզորմի:

—Աստուած ըզորմի էս շինի հին ու նոր ննջեցեալանց:

—Աստուած ըզորմի:

—Աստուած ըզորմի մեր հայոց ազգի անցաւորանց:

—Աստուած ըզորմի,—կրկնեց ժողովուրդը:

Հոգեթասերն սկսեցին արագ-արագ պտտուել: Գինի տոռոյները առաջարկում էին հիւրերին լիքը բաժակներն, ասելով՝ «Աստուած ըզորմի անցաւորանց»: Ընդունողները կրկնում էին նոյնն ու անցաւորանց հոգու հանգստութեան համար դատարկում բաժակները:

—Հայր սուրբ,—դարձաւ նրան Մնացականց Հանէսը,—լաւ վրդապետ ես, լաւ, ամա ափսոս, որ քարոզ տալը գիտում չես: Միտդ ա՛, անցեալ տարի Վարդապա-

¹⁾ Ժողովուրդը:

ուին սրբազանն ու յաջորդը ո՞նց էին քարոզ տալիս. բարք գլխիցն ա կտրուել էնհէնց մի քարսզը՝ մի դու էլ տուր է, մի դու էլ տուր, որ ասեմ թամամ վրդապետ ես է։

— Զանէս, մատաղ եմ, — պատասխանեց նրան հայր սուրբը, — նրանք համ քարսզում են, համ տըտրօղում ու գղում, այսինքն գինջ իրանց համար նստում, ուտում, խմում ու քէֆ անում։ Իմաստուն մարդիկ են, ֆրանգի երկրումն են կարգացել, քերականութիւն են սովորել։ Նրանք ինձ պէս վար ու հունձ անող չեն, շէնից-շէն, չներ հաշացնելով, փալանած իշի վրայ նստած, ժողովաբարութեան չեն ման գալի, որ կարգալը մոռանան ու էլ կարան ոչ քարոզ տալ։ Ես ո՞նց կարող եմ նրանց ետնից հասնել. էս հասակում էլ ո՞նց կարգալ-գրելը սովորեմ, որ ժողովրդին ղօրբա-ղօրբա ¹⁾ քարոզներ տամ. ես մի խեղճ մշակ վրդապետ եմ։ Ո՞ւր ա, եթէ ես նրանց չնորհքն ունենայի, քարոզ կը տայի ժողովրդին ու յետոյ կը գնայի մեր անապատումը գինջ կը նստէի, Աստուծու տուածից ինձ համար բօլ ²⁾ կուտէի, բօլ կը խմէի, ձեռքերս հօտաւէտ սապոններով կը լուանայի, որ ջահիլ-ջհուլ հարսներն աջս առնելու համար իրար գլուխ պատառէին ու ասէին իրանց մէջ՝ «այախ ³⁾», էն ա լաւ վրդապետ հա. էն օրը եկեղեցում հէնց քարոզ տուաւ, հէնց քարոզ տուաւ, որ էն լաց եղայ։ Դէ ես կարում չեմ քարոզ տամ, որ հարսներն ինձ գովեն։ Քեանդեազըմհազ ու Ստեփաննոս հայրերը, քարոզը թողած, ինձ այլ բաներ սովրեցրին։ Նրանք միշտ ուզում էին ու բաժանում, նրանք միշտ աշխատում էին իրանց մերձաւոր եղբօր համար, որ վերջն իրանց ըղորմի տան այս աշխարհում, իսկ այն աշխարհում առանց խղճի խայթոցի կանգնեն Աստուծոյ ահիղ դատաստանի առաջ։ Ես էլ հետևում եմ նրանց

1) Մեծ. մեծ։ 2) Բաւականին։ 3) Աղջի։

օրինակին. վանքում աշխատում եմ ու տնքում. երբ գլուխս ճանկս է ընկնում, ազատում եմ վանական գործերից, վերցնում եմ իմ ծերունի Գիբի ամուն ու նրա հետ գիւղից-գիւղ, տնից-տուն ման եմ գալիս ու բաժին ուզում, երեսս անդացնում եմ, սրա-նրա դուռը թակում եմ, ուզում եմ, միշտ ուզում, որ յետոյ մեր անապատում ինձանից ուղղոյներին բաժանեմ: Կանայք երբեմն գլուխ հոգում են իմ յետից, քանի որ ես նրանց միշտ ձանձրացնում եմ իմ ուղղողութեամբ. այդ ոչինչ, թող հողեն. կը գայ ժամանակ երբ ըզորմի կասեն հայր սուրբին: Քեանդեազըմեազը միշտ ասում էր ինձ՝ «ա որդի, աշխատիր, քրտնի ժողովրդի համար, չը մոռանաս, որ նա քեզ հայր սուրբ է ասում. ջուր տուր ծառալին, հաց տուր քաղցածին, օթևան տուր անտուն-անտէրին, եթէ չունենաս դու միջոցներ, այն ժամանակ ուղի-բաժանի, ուղի-բաժանի, աշխատիր ըզորմատեղի թողնել այս ահ-ցաւոր աշխարհում, որպէս զի սատանաները չը տանջեն քեզ յաւիտեական աշխարհում»: Ստեփաննոս հայր սուրբն ասում էր՝ «ա որդի, այս աշխարհից այն աշխարհը մարդս միայն մի հարստութիւն կարող է իր հետ տանել—այդ մաքուր անունն է և մի գանձ կարող է միայն թողնել այստեղ—այդ բարի յիշատակն է. աշխատիր ժողովրդի սրտում թողնել այդ յիշատակը և քո անունը մաքուր ու անբիծ տանել քեզ հետ գերեզման. այն ժամանակ քեզ միշտ ըզորմի կասեն, և քո հոգին յաւիտեականութեան գրկում միշտ հանգիստ կը լինի»:

—Ա՛խալխը,—դարձաւ ժողովրդին Յովհաննէս հայր սուրբը, գինով լիբը գաւաթն առնելով ձեռքը,—Աստուած ըզորմի Քեանդեազըմեազ հայր սուրբին:

—Աստուած ըզորմի, միաձայն կրկնեց ժողովուրդը:

—Աստուած ըզորմի Ստեփաննոս վարդապետին,—ասաց հայր սուրբը:

—Աստուած ըզորմի,—կրկնեց ժողովուրդը:

—Աստուած ըզորմի Թարգմանչաց անապատի անցաւորանց,—ասաց հայր սուրբը:

—Աստուած ըզորմի,—կրկնեց ոգևորուած ժողովուրդը:

ՍՏԵՓԱՆ ԱՒԵՑԻՔԵԱՆ—ԲԱՆԱՆՑԵՑԻ